դակցութիւններ ունենալուց յետոյ՝ սկսեց պատրաստութիւններ տեսնել, որպէս զի առաջիկայ գարնան նոր շինութեան հիմը դրուի։

Սեպտ. 23-ին Դեր. Մաղաքիա եպիսկոպոսի ձեռքով ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացաւ Տ. Եղիշէ վ. Մուրադեան, որ կարգուած լինելով Աւարայրի թեմի առաջնորդ, մեկնեց յետոյ դէպի իւր պաշտօնատեղին։

Սեպտ. 24-ին Դեր. Ղևոնդ եպիսկոպոս կուսակրօն սարկաւագ ձեռնադրեց ս. Գայիանէի վանքում Աղէքսանդր Մուրադ-Բէկեանին, որ իւր ուսումն աւարտել է Ներսիսեան դպրանոցում և ապա մի քանի տարի ուսուցիչ է եղել ծխ. դպրոցներում, վերակացու Ներսիսեան դպրանոցում և Գէորգ Թովմասեանին, որ վերջին տարին աւարտեց ուսումը Մ. Աթոռի ձեմարանում և կարգուեցաւ նոյն ձեմարանի անտեսս, կրօնի և թուաբանութեան ուսուցիչ սարին դասարաններում։

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ



Երկարատև հիւանդութիւնից յետոյ Ախալցխայում՝ իւր ծննդավայրում անցեալ օգոստոսին կնքեց իւր մահկանացուն Ս. Էջմիածնի միաբան Պետրոս վարդապետը։ Նա ծնուել էր 1842 թուականին Ախալցխայում. ուսումն ստացել է նոյն քաղաքի Կարապետեան հոգևոր դպրոցում և որպէս յառաջադէմ աշակերտ՝ մղյանակ է ընդունել նոյն ժամանակ Վրաստանի և Իմերէթի առաջնորդ Կարնեցի Կարապետ արքեպիսկոպոսի ձեռքից։ 1858 թուականին ուրբաթ է ստացել, իսկ 1870 թուականի Նոյեմբեր 20-ին ձեռնադրուել է սարկաւագ։ Յաջորդ տարուայ փետրուար ամսին նշանակուել է Գեղարդայ վանքում վանահօր օգնական և 2 ամիս յետոյ՝ ապրիլի 5-ին, կուսակրօն քահանայ ձեռնադրուել Վեհապետեան Պետրոս եպիսկոպոսի ձեռքով։ 1875 թուի Նոյեմբերի 14-ին Ս. Սինոդի հրամանով կարգուել է Մուղնոյ վանքի վանահայր, իսկ 1877 թուին այդ պաշտօնի հետ ստացել է և Աշտարակի ու իւր շրջակայքի բարեկարգչի պաշտօն, որը վարել է մինչև յաջորդ թուականի սեպտեմբեր ամիսը։ 1878 թուականին Գ. Կաթուղիկոսի հրամանով նշանակուել է Նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայր. 2 տարի յետոյ, 1880 թուին, ստանձնել է և Նոր Նախիջևանի հոգևոր կառավարութեան նախանդամութեան պաշտօնը։ 1883-1884 վարել է Վաղարշապատի, Սարդարապատի, իսկ նորանից յետոյ՝ Նոր Բայազետի, Գէօքչայի և Դարաչիչակի գործակալութեանց պաշտօնը։ 1886 թուին կրկին անգամ վանահայր է կարգուել Մուղնոյ Ս. Գէորգայ վանքի։ Յաջորդ տարին կարգուել է Ղզլարի փոխանորդ։ Այդ պաշտօնը վարել է մինչև 1891 թուականի յունիսի 14-ը. ապա կամաւ հրաժարուելով վերադարձել է Ս. Էջմիածին և նոյեմբերի 12-ին ուղարկուել է Ադուլիս, որպէս վանահայր Ս. Թովմայի վանքի։

1894 թուին Վեհափառ Հայրապետի հրամանով կարգուել է Ախալցխայի և Ախալքալաքի վիճակների փոխանորդ, ուր մնացել է մինչև 1899 թուականը։ Ապա վերադառնալով Ս. Էջմիածին վարել է զանազան ժամանակաւոր պաշտօններ։ Իւր անբուժելի հիւանդութիւնը դարմանելու համար նա գարնան Տփխիս և ապա բժիշկների խորհրդով, իւր ծննդավայրը գնաց, ուր և վրայ հասաւ անխուսափելի մահը։ — Հանգուցեալը իւր աշխատութեանց համար արժանացել է երկիցս վարձատրութեանց. Բնասարբիոյ թեմական առաջնորդ Տ. Մակար Արքեպիսկոպոսից ստացել է ծաղկեայ կերպասէ փիլոն, ապա նոյն հանգուցեալ Տ. Մակար Կաթողիկոսի Հայրապետութեան օրերում արժանացել է վարդապետական ակնակուռ լանջախաչի։ —

Հանգուցեալ Տէր Հոգի պաշտօնէին ս. Եկեղեցւոյ ի լոյս երեսաց իւրոց։

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ

Սեպտեմբերի 29-ին, ս. Գէորգ զօրավարի

ոնին, սովորական շքով կատարուեցաւ Մայր Աթոռի հոգևոր ձեմարանի 27 ըդ. տարեդարձի հանդէսը։ Այդ օրը պատարագիչ էր ձեմարանի Տեսչի օգնական Հ. Յուսիկ վարդապետը. պատարագին երգում էր Արժ. Հ. Կոմիտաս վարդապետի պատարատած քառաձայն խումբը։ Պատարագից յետոյ ամբողջ միաբանութիւնը և ձեմարանի աշակերտներն ու ուսուցիչները խմբուեցան Հոգևոյս Տ. Գէորգ Գ. Մեծագործ Հայրապետի շիրմի շուրջը և հոգեհանգիստ կատարեցին։ Շիրիմի վերայ ձեմարանի աշակերտները բնական ծաղիկներից հիւսած մի գեղեցիկ պսակ էին դրել. Գ. լաբրանի ուսանողներից մէկն արտայայտեց մի ճառով իւր և ընկերների երախտագիտական զգացումները։ Այնուհետև միաբանութիւնը, ուխտաւորների բազմութիւնը և ներկայ եղող հասարակութիւնը դիմեցին ձեմարանի հիւսիսային բակը, ուր հանդիսի բացումից յետոյ ձեմարանի Տեսուչ Հ. Կարապետ վարդապետը, ամբիոն բարձրանալով՝ անցեալ ուսումնական տարուայ հաշիւը ներկայացրեց, որ տպւում է ստորև. իսկ երգեցիկ խումբը՝ Հ. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ, պատշաճաւոր երգեր երգեց։

Վերջին տարիներս սովորութիւն է դարձել ձեմարանում տարեդարձի օրը երեկոյեան դիտական—դրական երեկոյթ կազմել։ Այստեղ եւս հրապարակ ելաւ երաժշտագէտ Հ. Կոմիտաս վարդապետը, որ Հայոց եկեղեցական ուխտ ձայնի մասին մի հետաքրքրական բանախօսութիւն արաւ։ Աշակերտներից մի քանիսը՝ Հ. Կոմիտասի հրահանգած առոգանութեամբ, մի քանի գեղեցիկ ոտանաւորներ արտասանեցին. իսկ խումբը պատաւական ներդաշնակութեամբ ազգային և ժողովրդական զանազան երգեր երգեց, որոնցով հոգեկան մեծ բաւականութիւն պատճառեց բոլոր հանդիսականներին։

Դրական հանդիսից յետոյ լուսավառութիւն տեղի ունեցաւ. ձեմարանի սանները աշխատել էին, որքան կարելի է, ճաշակով զարդարել և լուսաւորել այն լուսատու հաստատութեան ճակատը, որ միանգամ եւս արդէն 27 ամեայ հասակում, դուրս էր գալիս հայ ժողովրդի խուռն բազմութեան առաջ, նրան իր անցեալը ներկայացնելու և ապագայի համար մեծ յոյսեր ներշնչելու։ Ցիրաւի, գեղեցիկ էին բնական թարմ տերևներից և ոստերից հիւսուած շղթաները, շնորհալի՝ հոտաւէտ գոյնզգոյն ծաղիկներից բոլորած պսակները, հմայիչ՝ բազմերանգ գոյներով փոքրիկ տուողլապտերների երկար շարքերը, ճրագների պէտ—պէտ խմբերը. գիտութեան հարսի ոսկեայ մանեակն էր այդ՝ իւր ականակուս շղթայով։ Եւ նորա առաջ շրջան առած, պարբոնած երգում էին իւր սանները, մինչ միւս կողմը շրջակայքից և հեռաւոր տեղերից եկած ուխտաւոր երիտասարդներն ու ջահիլ աղջիկները կոնարոնուկ նայլի էին տալիս։ Եւ ուրախանում էր հիգ հայ գիւղացին, մի բոպէ իւր անթիւ հոգսերն ու ցաւ—տանջանքները մոռացութեան տուած՝ յափշտակուում ակնապարար տեսարանով, յուզուում և խնդում ձեմարանի դովքն անում։

Այնուհետև, մինչ ժողովուրդը գոհ սրբտով, միաքը երազանքներին տուած՝ տուն էր դառնում տեսածը իւրայիններին պատմելու, ձեմարանական ընտանիքը և մի քանի նախկին ձեմարանականներ, համեստ ընթրիքի սեղանի շուրջը խմբուած՝ ոգևորեալ ճառերով լուսաւոր ապագայ էր բարեմաղթում այդ ժողովրդին, նրա բարօրութեան համար բաժակ բարձրացնում։ Կարդացուեցան և այն հեռագիրները, որ ուղղել էին ձեմարանի բարեկամները և նախկին սանները։ Առանձին ոգևորութեամբ ընդունուեցաւ Վ.Հ. Հայրապետի հեռագիրը, որով օրհնում էր ձեմարանի Տեսչին, ուսուցչական խմբին, սաներին, և ձեմարանին արևշատութիւն և անսասանութիւն բարեմաղթում։

Հետևեալ օրը Վ.Հ. Հայրապետի Օծման Ը. տարեդարձն էր։ Պատարագից յետոյ կատարուեցաւ հայրապետական մաղթանք և ապա հանդիսաւոր ճաշկերոյթ եղաւ Մ. Աթոռի սեղանատանը։ Այդ օրը Երևանից եկել էին ուսուցչական սեմինարիայի աշակերտները՝ իրենց տեսչի և ուսուցիչների առաջնորդութեամբ։ Երեկոյեան վանքի բակում լուսավառութիւն կար։ Հաւաքուած էր ուխտաւորների մեծ բազմութիւն. ձեմարանի աշակերտները Վ.Հարանի առաջ խմբուեցան, ուր Հ. Կոմիտասի

ղեկավարութեամբ երգեցիկ խումբը ազգային —ժողովրդական երգեր էր երգում։

Հոկտեմբերի 13-ին, ս. Թարգմանչաց տօնի երեկոյեան՝ ձեմարանում գրական հանդէս կար, ուր ներկայ էին միաբաններից շատերը։ Դոքանով սկիզբ դրուեցաւ մի շարք գրական երեկոյթներին, որոնք տեղի են ունենում երկու շաբաթը մի անգամ՝ այս կամ այն ուսուցչի ղեկավարութեամբ, նորա առանձնաձեռնարկներից բանախօսութեանց և ընթերցուածների նիւթ առնելով։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՃԵՄԱՐԱՆԻ

ԻԷ. ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՏԵՍՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Անցեալ 1900—1901 ուսումն. շրջանում ճեմարանն ունէր ընդամէնը 240 աշակերտ, որոնցից 207 նախկին և 33 նոր ընդունուած՝ 223 գիշերօթիկ սաներ և 17 երթևեկ էին։ Այսպիսով գիշերօթիկների թիւը մնաց գրեթէ նոյնը, ինչ որ էր նախընթաց շրջանում (226)։

Թէպէտ այդ թիւը, ինչպէս նկատուած էր անցեալ շրջանի Տեղեկագրի մէջ*, ամենամեծն է եղել ճեմարանի բացման օրից ի վեր՝ զարմանալի հակասութեամբ վերջին երկու տարիներս ամէնից աւելի խօսուեցաւ ու գրուեցաւ այն մասին, թէ ճեմարանը հարկաւոր չափով սաներ չունի, ապօրինի կերպով կրճատում է նոցա թիւը։ Իրողութիւնն այն է սակայն, որ ճեմարանը ներկայ պայմաններում շատ ծանր զոհաբերութիւնների շնորհիւ միայն կարողանում է այդչափ գիշերօթիկ սաներ պահել։ Ուրիշ դժուարութիւններ մի կողմ թողած՝ այժմեան շինուածների մէջ կարելի չէ, առանց առողջապահութեան կանոնների դէմ մեծապէս մեղանչելու, աւելի քան 200 գիշերօթիկներ պատսպարել. եթէ ուրեմն հարկը ստիպում է աւելի ընդունել (ինչպէս և այս տարի արդէն մօտ 20 հոգի աւելի ընդունուած են), այդ լինում է ի զրկանս ընդհանուրի։ Աշակերտների այժմեան թիւը դգալի կերպով մեծացնելու համար առաջին պայմանն է՝ ընդարձակել ննջարանը և մի նոր շէնք կառուցանել դպրանոցական դասարանների համար։

Դասարանների և թեմերի համեմատ աշակերտների բաժանման և փոխադրութեան պատկերը կարելի է տեսնել հետևեալ տախտակից.

Կարգ	Դասարան և լսարան	ԱՇԱԿԵՐՏՔ					ՏԱՐԵԿԱՆ ԸՆԹԱՑՔ ՑԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ					ԹԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՍՏ ՎԻՃԱԿԱՑ							
		Հին	Նոր	Երթևեկ	Գիշերօրիկ	Գումար	Աւարտեց	Փոխեց	Մնաց	Գումարից մնաց	Արտաքին ընդունուած	Երեւանցիներ	Վրաստանցիներ	Իմերերներ	Արցախցու	Շամախցու	Աստրախանցի	Թեաարտիոյ	Տաճկաստանցի	Պարսկաստանցի
1	Ա. զուգ	11	19	10	20	30	—	9	11	2	8	19	2	1	—	—	—	8	—
2	Ա. հիմն	31	5	3	33	36	—	23	1	9	3	26	1	1	—	—	—	7	1
3	Բ.	32	6	4	34	38	—	9	7	17	5	21	3	3	—	1	1	7	2
4	Գ.	27	—	—	27	27	—	11	1	15	—	12	—	1	—	—	1	11	2
5	Դ.	22	3	—	25	25	—	11	—	12	2	11	4	3	—	—	2	3	2
6	Ե.	24	—	—	24	24	—	12	3	9	—	14	3	—	—	—	2	5	—
7	Զ.	18	—	—	18	18	—	15	—	3	—	5	3	4	2	—	1	3	—
8	Ա. լս.	17	—	—	17	17	—	14	1	—	2	6	—	3	—	—	1	7	—
9	Բ. լս.	13	—	—	13	13	—	13	—	—	—	6	2	1	—	1	—	3	—
10	Գ. լս.	12	—	—	12	12	12	—	—	—	—	4	3	1	—	—	—	1	3
	Գումար	207	33	17	223	240	12	117	24	67	20	124	21	18	2	2	8	55	10

* Արարատ 1901. ապրիլ, եր. 217։

Ուրեմն անցեալ շրջանում ևս ճեմարանը բացի երեք մասնագիտական և վեց դպրանոցական դասարաններից՝ ունեցաւ զուգընթաց դասարան Ա-ի համար. բայց մինչդեռ նախընթաց շրջանում զուգընթացը հիմնականի համեմատութեամբ շատ թոյլ դասարան էր, այս անգամ նոցա ուսման չափը գրեթէ հաւասար եղաւ, և միայն Ա. դասարանի աշակերտների չափազանց շատութիւնն էր հարկադրել երկու մասի բաժանել. ուստի շատ աշակերտներ զուգընթացից անմիջապէս Բ. դասարան փոխադրուեցան։

Ինչպէս վերևի պատկերից երևում է, դպրանոցական բաժնի բոլոր աշակերտները 198 էին, մասնագիտական բաժնի ուսանողները 42։ Նախընթաց շրջանի տեղեկագրի մէջ մենք իբրև ուշադրութեան արժանի ուրախաւէտ մի հանգամանք էինք նկատել ուսանողների թուի զգալի կերպով աճելը՝ նախընթաց տարիների համեմատութեամբ։ Մասն. բաժնում միայն մի տարի (1893/94 թ.) 42-ից աւելի ուսանողներ են եղել (44), այն ևս մեծ մասը տարուայ ընթացքում ուսումը կիսատ թողել ելեր են. այնպէս որ վերջին շրջանի ուսանողների թիւը ամենամեծը պէտք է համարուի, և այդ աչքի է ընկնում մանաւանդ նորա համար, որ թեմ. դպրանոցներն աւարտողներից վերջին տարիներս ճեմարան դիմող գրեթէ չի եղել։ Դորա մի պատճառը եթէ այն է, որ դպրանոցաւարտները, մանաւանդ Երևանի թեմ. դպրանոցն աւարտողները, չեն կարողանում անմիջապէս Ա. լսարան մտնել, որովհետև ճեմարանի դպրանոցական բաժնի ծրագիրը մի քանի կէտերում տարբեր և ընդհանրապէս բարձր է միւս դպրանոցների ծրագիրներից. միւսը, և աւելի կարևորը՝ այն դժբախտութիւնն է, որ դոքա հոգևոր կոչման համար չեն՝ պատրաստուում և նոր բան սովորելու ախորժակ չունին, կամ եթէ ունենում են, անպակաս են մոլորեցնողները ու համոզողները, թէ ճեմարանի լսարաններում ոչինչ չեն սովորի։ Աւելորդ է ասելը, որ ճեմարանականների բռնած ընթացքը բոլորովին հակառակն է ապացուցանում։

Լիակատար ընթացքն աւարտող 12 հոգուց մին՝ Դեղամ Սարգսեան, տարուայ կիսին ինչ ինչ պատճառներով ելեր էր աշակերտութիւնից և վերջը քննութեան իրաւունք և արտաքոյ կարգի վկայական ստացաւ։ 6 հոգի ուրարակիր էին, 2 հոգի ևս՝ Դէորգ Թովմա-աղայեան Վանեցի և Խաչիկ Տէր Ղազարեան Ղազախի Ղոշղոթան գիւղից, միաբան ընդունուեցան և ուրար ստացան. որոնցից առաջինը սեպտ. 25-ին ձեռնադրուեցաւ սարկաւագ։ Ուրեմն ընդամէնը ինն հոգի այս շրջանի ուսումնաւարտներից հոգևոր կոչման են նուիրել իրենց։ Եւ այդ համարուում է ոմանց համար ապացոյց, որ ճեմարանի հոգևորական վարիչներն ու ուսուցիչները, ուրիշ ոչ մի բանի շնորհք չունենալով՝ չեն կարողանում նաև հոգևոր կոչման համար մարդիկ պատրաստել (իբրև թէ ամենադիւրին գործը լիներ այդ, մանաւանդ մեզ շրջապատող պայմաններում)։

Զգալի փոփոխութիւն ուսուցչական խմբի մէջ այն եղաւ, որ արտասահմանից վերադառնալով պաշտօն ստացան ճեմարանում Տ. Եղնիկ (Հ. լեզուի և գրականութեան դասեր) և Տ. Յուսիկ (Աստուածաբանութեան և կրօնի դասեր, տեսչի օգնականութեան հետ) վարդապետներ, և Ռուսաստանից՝ Տ. Մամբրէ վարդապետ (կրօնի դասեր Բ. և Գ. դասարաններում՝ անտեսութեան հետ)։ Այսպիսով ճեմարանը առաջին անգամ աչքի ընկնող թուով հոգևորական պաշտօնեաներ ունեցաւ՝ 6 վարդապետ, բոլորեքեան նոյն ճեմարանում ուսումն աւարտելուց յետոյ Եւրոպայում (և Ռուսաստանում) բարձր. կրթութիւն ստացած։ Հրաժարուած աշխարհական ուսուցիչների փոխարէն նոր հրաւիրուեցան.

Պ. Յ. Բուդաղեան՝ մաթեմ. առարկաների համար, որ աւարտել է Օդեսայի համալսարանի ֆիզիք.—մաթեմատիկական բաժինը.

Պ. Ա. Աբրահամեան՝ Ա. Բ. և Գ. դասարանների Ռ. լեզուի, և Ռ. աշխարհագրութեան համար, որ աւարտել է Տփխիսի ուսուցչական ինստիտուտը.

Պ. Յ. Յովհաննիսեան, որ նախորդ կի-

սամեակում տեսչի օգնականի պաշտօն էր վարում, բարձր դասարանների Ռ. լեզուի և Ռ. պատմութեան համար. բայց որովհետև նա գեկտեմբեր ամսին Նորին Վեհափառութեան բացարձակ հրամանով թոյլատրուեցաւ Տփխիսի Յովհաննեան դպրոցի տեսչութիւնն ստանձնելու՝ այդ դասերը բաց մնացին, և նոր յարմար ուսուցիչ չգտնուելու պատճառաւ՝ բժանուեցան եղած ուսուցիչների՝ պ. պ. Ս. Տիգրանեանի, Յ. Բուդաղեանի, Հ. Կանայեանի և Ա. Աբրահամեանի մէջ։

Արդէն հոկտեմբեր ամսում վերակացութեան պաշտօնից հրաժարուեցաւ պ. Մ. Հախնազարեան, որի ստանդած ընդհ. աշխարհագրութեան 6 դասերը յանձնուեցան ճեմարանի նախկին սան Լ. Նոր—Արևեանին։

Դասեր ստանդում էին նաև բոլոր վերակացուները ու մատենադարանապետութեան պաշտօնի համար հրաւիրուած նախկին սան Ա. Շահնազարեան. մի քանի դաս ևս դեղագործ ու հիւանդապահ պ. Հ. Կանայեան (Բժշկ. Ակադեմիայի Գ. բաժնից)։

Նորին Վեհափառութեան հրամանով այս շրջանում իբրև արտաքոյ կարգի պարապմունք ստեղծուեցան գիւղատնտեսութեան դասեր, որ ստանդում էր պ. Մ. Ղազարոսեան՝ Ֆրանսիայում մասնագիտական կրթութիւն ստացած։ Այդ դասերը կամաւոր էին, 2 դաս լսարանական ուսանողների և 3 դաս Դ. Ե. և Զ. դասարանների աշակերտաց համար, որոնց երկրագործական զբաղմունքների համար յատկացրած էր ճեմարանին կից մի ընդարձակ վարելահող։ Նոյն տեղում դում ևս կառուցուեցաւ, որպէս զի գիւղատնտեսութեամբ պարապող աշակերտները զբաղուին նաև կամենատնտեսութեամբ, և այդ դումում պահուող անասուններից ստացուած կամենեղէնը գործադրուի աշակերտների սնունդի համար։

Ինչպէս յայտնի է, արտաքոյ կարգի պարապմունք համարուել են ճեմարանում մինչև այժմ տաճկերէնի դասերը՝ տաճկահպատակների համար, որոնց ուսուցիչն է վերջին տարիներս պ. Հ. Աճառեան։

Մանկ. խորհուրդի գումարումներ եղել են 29 անգամ, որոնցից 20 բոլոր ուսուցիչների միացեալ ժողով էր և 9 միայն մասն. բաժնի ուսուցիչների։ Բացի ընդհանուր յառաջադիմութեան և դաստիարակութեան վերաբերեալ խնդիրներից՝ քննութեան առարկայ է եղել այստեղ մի քանի առարկաների ծրագիրը, ճեմարանում ստանդուած բոլոր առարկաների համար մանրամասն ծրագիր կազմելու նպատակով։ Առ այժմ կարելի է եղել ձևաւորել և տպագրել այն առարկաների ծրագիրը միայն, որոնցից պէտք է քննութիւն տան ճեմարանի Ա. դասարան մտնողները. մնացած ծրագիրները մշակելու գործը թողնուեցաւ առաջիկայ ուսումն. շրջանին։

Դաստիարակչական գործի մէջ այս տարի ևս բաւական ընդարձակ տեղ են բռնել ոտնական հանդէսներն ու գրական երեկոյթները։ Առանձնապէս հանդիսաւոր կերպով կատարուել է ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքեալների տօնը, որովհետև Նորին Վեհափառութիւնը հաճեցաւ ներկայ գտնուել հանդիսին և կարդալ իսկ՝ ի մեծ հոգևոր բաւականութիւն Իւր հոգևոր զաւակաց, Իւր մի քերթուածը։ Ապա խիստ գեղեցիկ և ուշագրաւ էր Հայր Կոմիտաս վարդապետի կազմած երաժշտական երեկոյթը ս. Լուսաւորչի «Մուտն ի վիրապն» տօնին, որին բացի Միաբանութիւնից և ճեմարանի ուսուցիչներից ու աշակերտներից ներկայ էին նաև մի քանի հիւրեր՝ Երևանի Թեմ. դպրանոցի տեսուչն ու մի քանի ուսուցիչներ, բարձր դասարանների աշակերտների հետ։ Վեհափառ Հայրապետն Իւր ներկայութեամբ շուք և կենդանութիւն տուաւ նաև անփոխարինելի բարերար Գ. Ջանչեանի յիշատակը պատուելու և նորա գրական գործունէութեան հետ ծանօթացնելու նպատակով պատրաստուած երեկոյթին, ուր կարդաց կրթական որբերի խնամող ողբացեալին նուիրած Իւր քերթուածը։ Բացի այդ երեկոյթից տեղի են ունեցել գրական երեկոյթներ, որոնց նիւթը եղել են ճեմարանում ստանդուող մի մի առարկայի՝ հայոց լեզուի և գրականութեան, բնագիտութեան, գերմա-

ներէնի վերաբերեալ նիւթեր։—Ցիշատակելի տօնական մի օր այս շրջանում ձեմարանի համար էր նորին Մեծութիւն Պարսից Արեգակնափայլ Շահի շնորհաբեր այցելութիւնը Մայր Աթոռ հոկտեմբեր 11-ին, թէպէտ Մեծափառ արքայից արքան, սակայն զգալով Իրեն՝ բաւականացաւ ձեմարանի բակից միայն անցնելով, և մուտք չգործեց արքայական հիւրին ընդունելու համար չքեղապէս զարդարած շէնքի մէջ։

Ուսուցիչների փոփոխութեան հետ Վեհափառ Հայրապետի հաճութեամբ փոքրիկ փոփոխութիւններ եղան նաև թէ դպրանոցական և թէ մասնագիտական բաժնի դասացուցակների մէջ։ Դպրանոցական բաժնի առարկաները կարգաւորուեցան այնպէս, որ կարելի լինէր մայրենի և պետական լեզուները զօրացնելու նպատակով հայերէնի և ռուսերէնի մի մի դաս աւելացնել Դ. և Ե. դասարաններում, և ռուսերէնի մի դաս Զ. դասարանում։ Մեթոդիկայի փոխարէն դրուեցան փիլիսոփայութեան պատմութեան դասեր՝ նոր փիլիսոփայութիւն Գ. լսարանում և յունական փիլիսոփայութիւն միացեալ լսարաններում։ աւելացաւ Հ. լեզուի քննական քերականութեան ուսումը Ա. լսարանում։

Դասերը սկսուեցան սեպտեմբեր 4-ին և դադարեցին մայիս 19-ին։ Քննութիւններ եղան միայն դպրանոցական և մասնագիտական բաժիններն աւարտողների համար՝ բոլոր առարկաներից, և Ա. ու Բ. լսարանների համար այն առարկաներից, որոնք աւարտուում են այդ լսարաններում։ Սկսուեցան քննութիւնները (Զ. դասարանում) ապրիլ 12-ին և վերջացան մայիս 26-ին։

Տարուայ ընթացքում պարապած բոլոր դասերի գումարն է՝ 6241։

Բաց մնացել են ընդամէնը 186 դաս (մի որոշ մասը պ. Յովհաննիսեանի տարաժամ հրաժարուելուն պատճառով), որից 108 դաս բացակայողների փոխարէն պարապել են ուրիշ ուսուցիչներ. բոլորովին չպարապած դասերի գումարն է 78։

Ահա պակաս և աւելի պարապած դասերի ցուցակը.

Դասի թիւ	Ազգի եւ անուանի Ուսուցչաց.	Դասեր մասնաւոր բացակայութեան.	Դասեր ուսուցչի պատճառով մնացած.
1	Տ. Կարապետ վարդ.	3.	19.
2	Տ. Յուսիկ վարդ.	4.	11.
3	Տ. Եղնիկ վարդ.	5.	3.
4	Տ. Կոմիտաս վարդ.	17.	8.
5	Տ. Գարեգին վարդ.	15.	4.
6	Տ. Մամբրէ վարդ.	1.	2.
7	Պ. Արեղեան Մ.	19.	-
8	Պ. Յարութիւնեան Ս.	16.	4.
9	Պ. Կանայեան Ս.	9.	3.
10	Պ. Մանանդեան Յ.	8.	1.
11	Պ. Տիգրանեան Ս.	6.	1.
12	Պ. Յովհաննիսեան Գ.	53.	1.
13	Պ. Աբրահամեան Ա.	5.	10.
14	Պ. Բուդաղեան Յ.	8.	6.
15	Պ, Կանայեան Հ.	1.	-
16	Պ. Ղազարեան Դ.	1.	5.
17	Պ. Հախնազարեան Մ.	7.	1.
18	Պ. Շահնազարեան Ա.	3	3.
19	Պ. Նոր-Արևեան Լ.	3.	7.
20	Պ. Արիստակէսեան Յ.	-	6.
21	Պ. Մխիթարեան Բ.	-	5.
22	Պ. Ղազարոսեան Մ.	2.	-
23	Պ. Աբրահամեան Վ.	-	8.
	Գումար	186.	108.

Ձեմարանի մատենադարանն այս շրջանում ևս աչքի ընկնող նուէրներ ընդունեց գրքից և ճոխացաւ։

Բարեյիշատակ Գր. Զանչեան, իւր կենդանութեամբ մի քանի անգամ մեծաքանակ արժէքաւոր գրքեր ու ժողովածուներ նուիրելուց յետոյ՝ կտակել էր, ինչպէս յայտնի է, իւր մատենադարանի մնացած գրքերն ևս ձեմարանի մատենադարանին։ Նորա կտակակատարները արտօնութիւն ունենալով վերցնելու այդ գրքերից որչափ հարկաւոր համարէին՝ ըստ երևութիւն չատ չօգտուեցան այդ արտօնութիւնից, այլ ձեմարան ուղարկեցին . . . . 622 հատոր գիրք

Դորանից ռուսերէն . . 466 հ.
Օտար լեզուներով . . 146 հ.
Հայերէն . . . . . 10 հ.

Այլ և Վսեմ. պ. Կ. Եղեան, որին ձեմարանի մատենադարանը գրեթէ ամէնից աւելի պարտական է իւր ունեցածով՝ ուղար-

կեց կրկին զանազան արժէքաւոր հրատարակութիւններ . . . . . 147 հատոր

Նուիրատուի հաշուին կազմուելով ցուցակի ու գործունէութեան մէջ մնան Հ. Մուշէ վարդապետի Ձեմ.-ի քսանհինգամեակի առթիւ նուիրած գրքերը . 275 հ.

Շնորհ. Նապի սարկ. նուիրել է 116հ.

Զ. Դասատան աշակերտների կազմած աշակերտական մատենադարանից յանձնուել է . . . . . 78հ.

Արարատի խմբագրութեան անունով և զանազան տեղերից ստացած մնար գրքեր . . . . . 74հ.

Նախկին Թիֆլիսի Հայոց Հրատ. ընկերութիւնից . . . . . 20հ.

Այլ և այլ անձանց նուէրներ . 68հ.

Բացի դրանից հանդուցեալ Խորէն եպիսկոպոսի յիշատակի համար Մոսկուայի մի քանի յարգողների շրջանում ժողովուել և աշակերտաց ընթերցանութեան լաւագոյն գրքեր գնելու պայմանով ուղարկուել է . . . 256ր.

Ադուլեցի յայտնի վաճառական պ. Ս. Հախնազարեան ևս նուիրել է ու խոստացել 5 տարի շարունակ նուիրել տարեկան . . . . . 100ր.

Այս գումարների մի մասով գնուած են արդէն դիպուածաբար շատ ժան՝գնով վաճառուող գերմաներէն և հայերէն գրքեր . . . . . 361հ.

Օդեսայից պ. Մուրադեան նուիրել էր 100 ր., որ միանուագ վճարուեցաւ գնելու համար՝ նոյնպէս դիպուածով, Գրիմմի մեծահարուստ գերմաներէն բառարանը։

Ձեմարանի հաշուով գնուած են գրքեր և դասագրքեր . . . . 330 հ.

Ամբողջ բոլոր գրքերի գումարն է 2093 հ.

Ներկայ ուսումն. շրջանի սկզբին Ձեմարանի ունեցած բոլոր գրքերն էին.

Հիմնական մատենադարանում.

Հայերէն	2792 հ.
Ռուսերէն	6017 հ.
Ֆրանսերէն	1821 հ.
Գերմաներէն	915 հ.
Այլ լեզուներով	316 հ.
ընդամէնը .	11,861 հ.

Աշակերտական մատենադարանում.

Հայերէն ընթերցանութեան .	1406 հ.
Ռուսերէն « .	926 հ.
Դասագրքեր	5567 հ.
ընդամէնը .	7899 հ.
Բառարաններ երկու բաժնում	372 հ.
Բոլոր գրքերի գումարն է .	20,132 հ.

Մատենադարանապետ էր Ձեմարանի նախկին սան Ասլան Շահնազարեան։

Ինչպէս երևում է վերևի հաշուից՝ Ձեմարանի մատենադարանում հայերէն գրքերը քիչ տեղ են բռնում համեմատաբար և քիչ թուով են աւելանում։ Դորա գլխաւոր պատճառն այն է, որ ստացուած նուէրների մէջ հայերէն գրքերը միշտ սակաւ են, իսկ Ձեմարանը դրամական միջոց չունի ամէն կարևոր գիրք գնելու, պէտք է սպասել, մինչև որ մի բարերար գտնուի՝ և լցուցանել այս մեծ կարիքը, միջոց տալով գնելու գոնէ հայերէն բոլոր այն գրքերը, որոնք գրականական արժէք ունին կամ աշակերտաց ընթերցանութեան նիւթ կարող են լինել։

Դրեթէ աւելի ևս մեծ է ընագիտական գործիքների պակասութիւնը, որը մի որոշ չափով լցուցանել նոյնպէս առանձին բարիք կլիներ Ձեմարանին։

Աշակերտների բարոյական դաստիարակութեան և կարգապահութեան վերայ ի մտաց հսկում էր Տ. Յուսիկ վարդապետ, որ Վեհ. Հայրապետի սրբ. կոնդակով տեսչի օգնական կարգուեցաւ։ Վերակացութեան պաշտօնի համար նոր հրաւիրուեցաւ Ձեմարանի նախկին սան Յակոբ Արխատակէսեան։ Նախկին վերակացուներից պաշտօնի մէջ մնացին՝ պ. Հախնազարեանի հրաժարուելուց յետոյ, պ. պ. Բ. Միրաբեան և Դ. Ղազարեան։

Առողջապահական մասի հսկողութիւնը յանձնուած էր ըստ առաջնոյն Բժ. պ. Կ. Տէր Խաչատրեանին, որի բժշկական հմտութիւնը առանձնապէս փայլուն կերպով երևան եկաւ այս շրջանում, երբ հիւանդութեան դէպքերը աշակերտների մէջ սովո-

բականից աւելի յաճախ էին և վտանգաւոր *։ Այնպէս փոփոխական եղանակներին ձեմարանում միաժամանակ քսանից աւելի հիւանդներ կային, որոնցից 6-ը «տիֆ»-ով բռնուած և երկուսը մանաւանդ այնպիսի ծանր «տիֆ»-ով, որ գրեթէ մահուան դրկից խլուեցան. իսկ տարուայ վերջին, մեծի պահոց ծանր օրերից յետոյ, աշակերտներին ընդհանրապէս այնչափ թուլացել էին ու արեան պակասութիւն, և «սկորբուտ» այնչափ տարածուել, որ քչերին միայն կարելի էր կատարելապէս առողջ համարել։ Եթէ այդպիսի հանգամանքներում այս շրջանն էս առանց մահուան դէպքի անցաւ՝ Նախախնամութեան մի բացառիկ մեծ շնորհն էր, որ մենք պէտք է իբրև ամենաբարի ազդարարութիւն համարենք, բոլոր հնարաւոր միջոցներով այդ հիւանդութեանց գլխաւոր պատճառները վերացնելու։ Առաջին և բուն պատճառն այն է անշուշտ, որ ձեմարանի տնտեսական պայմանները համապատասխան չեն աշակերտների թուին. որ Մ. Աթոռի սուղ միջոցները չեն նեղում նոցա բաղմանալու հետ հաւասար չափով ընդարձակել ծախուց նախահաշիւը և մնունդը բարւոքելու առողջապահական դիւրութիւններ ստեղծել. որ, ինչպէս յիշուեցաւ, ձեմարանի շինուածները հարկաւոր չափով ընդարձակութիւն և յարմարութիւններ չունին։ Այս վերջին խիստ զգալի կարիքը առաջիկայում լեցուած կլինի մասամբ նորանով, որ Բագուի յայտնի մեծատուն եղբարք Թումայեանք յանձն են առել նոր հիւանդանոց կառուցանել ձեմարանի համար, և արդէն շինութիւնը սկսուած է։ Այլ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ մնօրինութեամբ, ձեմարանի քսան և հինգամեակին նուէր ստացուած մօտ 5000 բուբլի դրամը, որ Նորին Սրբութիւնը մտադիր էր սկզբում հիւանդանոցի շինութեան համար գործ դնել՝ գործադրուում է այժմ մի քանի անհրաժեշտ նորոգութիւնների համար հին շինուածների մէջ, ի թիւս այլոց՝ փոխելու հիմնական շինուածքի բոլոր լուսամուտները, որոնք իրենց անյարմար ձևով և խարխուլ դրութեամբ ոչ կանոնաւոր օդափոխութիւն և ոչ ձմեռ ժամանակ ջերմութիւն պահելու դիւրութիւն էին ներկայացնում։

Ձեմարանի տնտեսական կառավարութեան մէջ անցեալ շրջանում այն կարևոր փոփոխութիւնը տեղի ունեցաւ, որ յունուար ամսից Մ. Աթոռի հովանու ներքոյ եղող միւս հաստատութիւնների շարքում նորա բոլոր առ ու ծախքն էս յանձնուեցաւ Վան. Կառավարութեան, և նորա տեսուչը անդամ կարգուեցաւ Կառավարութեան։

Տնտես նշանակուած էր Տ. Մամբրէ վարդապետ։

Իսկ աշակերտների ճաշը, որ անցեալ շրջանում ձեմարանի սեղանատանն էր տրուում, փոխադրուեցաւ կրկին վանքի սեղանատուն։

Ներկայ 1901 թ.-ի համար նախահաշուով ձեմարանի բոլոր ծախքը (բացի կերակրեղէնից) նշանակուած է 42390 ր.։

Պէտք է ինկատի ունենալ սակայն, որ այս գումարի մէջ կան դրամներ, որոնք անմիջապէս ձեմարանի վերայ չեն գործադրուում, կամ միայն որոշ յարմարութիւնների պատճառաւ մուցրած են նորա նախահաշուի մէջ։ Այսպէս՝ բարձր. կրթութիւն ստացող սարկաւագների թոշակ և ս. Ս. Մանդինեանի կենսաթոշակ . . . . . 2700 ր.։

Պաշտօնեայ 6 վարդապետների (որոնցից իւրաքանչիւրն ստանում է տարեկան 600 ր.՝ իբրև միաբանական ռոճիկ 300 ր. և ուսումն. գրազմանց համար 300 ր.) վարդ. ռոճիկը . . . . . 1800 ր.

Դիւղատնտեսի ռոճիկ և դիւղատնտես. ծախք . . . . . 1200 ր.

ընդամէնը . 5700 ր.

որ եթէ հանենք ընդհանուր գումարից՝ ձեմարանի տարեկան բուն ծախքը կլինի 36,690 ր.

Ուսանող սարկաւագների համար որո-

---

* Տարուայ ընթացքում հիւանդանոց մտել են ընդամէնը . . . . . 261 աշ.
որոնցից տենդ և ջերմ ունեցողներ . 122 աշ.
սակաւարիւնութիւն և ընդհանուր թուլութիւն . . . . . 47 աշ.
ինֆլուէնցիա . . . . . 21 աշ.
բկացաւ . . . . . 13 աշ.
տիֆ . . . . . 6 աշ.
և այլն։

չուած 2200 ր. գումարից տրուում էր 800 ր. թոշակ, Տիկին Շ. Մելիքեանի կտակի հաշուին՝ Շն. Երուանդ սարկաւագին, որ ուսանում է Լայպցիգում։ 600 ր. տրուում էր Շն. Պողոս սարկաւագին, որ Խարկովում էր, 600 ր. (Բար. Մեղուինեանի կտակի հաշուին) Շն. Կոստանդին սարկաւագին, որ Դորպատում էր, և 200 ր. Նպաստ Սմբատ սարկաւագին, որ ուսանում է Ս. Պետերբուրգում և 40 ր. ամսական թոշակ ստանում Հայոց եկեղեցուց։

Ուսումն. Շրջանի սկզբին այս ուսանողների շարքում էր նաև բոլորի անդրանիկ Մուշեղ սարկաւագ, որ իբրև խոկական ուսանող, իրաւաբանական բաժնի Դ. դասընթաց հասած՝ Ս. Պետերբուրգի համալսարանից Օգոստոս փոխադրուեցաւ, բայց դժնդակ թաքախաը ստիպեց արդէն նոյեմբեր ամսին ընդհատել պարապմունքներն ու Մ. Աթոռ վերադառնալ, ուր և կնքեց իւր մահկանացուն մարտի 8-ին, և այդպիսով միաբանութիւնը զրկուեցաւ իւր ամենափայլուն ապագայ խոստացող միանդամից։

Ձեմարանում որդեգիրներ ունեցել են՝ պ. Ե. Բուդաղեան երկու և պ. պ. Ի. Թադէոսեան, Ն. Իզմիրեան, Ա. Մատուրեան, Զ. Զանիոլաղեան, Մոսկուայի եկեղեցեաց խորհուրդը մի մի՝ ընդամէնը 7 որդեգիրներ։ Դոցա հետ հաշուելով այնպիսիներին, որոնց համար դրամական նպաստ է ստացուել իրենց մեծողներից՝ Ձեմարանի վարչութեան հասած բոլոր թոշակադրամների գումարը կլինի, 23 աշակերտի համար, 2850 ր. Ամենամեծ գումարն է դա, որ Ձեմարանի գոյութեան օրից ստացուել է, և եթէ հաշուենք նաև մշտական որդեգիրներին՝ 3 յանուն Բժ. Տիգրանեանի, մի մի յանուն Գ. Թումայեանի, Գ. Լալայեանի և եղբարց Ժամհարեանց, այն նպաստը, որ տրուում է տարէցտարի ս. Պետերբուրգի եկեղ. կալուածոց արդիւնքից քան որդեգիրների համար, Ախալցխայի եկեղ. կալուածոց արդիւնքից ելն., կերևայ որ Ձեմարանի դրսից ստացած օգնութիւնն այժմ զգալի կերպով աւելի է քան մի 7—8 տարի առաջ, բայց համեմատաբար աւելի մեծ չափով աճել են նաև նորա կարիքները, այնպէս որ նորա անտեսական ապահովութիւնը մնում է այնուամենայնիւ մի կէտ, դէպի որը դարձած պէտք է լինի հասարակութեան ամենաբուռն ուշադրութիւնը և որից մեծապէս կախուած է նորա յառաջադիմութիւնն ապագայում։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՅ ՏԱՏԵԱՆ

Հոկտեմբեր 7-ի գիշերը Կ. Պոլսոյ մէջ իւր մահկանացուն կնքեց Օսմանեան պետութեան արտաքին գործոց խորհրդոյն և Հայոց քաղ. ժողովոյ ատենապետ Յարութիւն Փաշա Տատեան 75 տարեկան հասակի մէջ։ 50 տարիէ աւելի Օսմ. Պետութեան զանազան պաշտօններուն մէջ գրանուելէ յետոյ։

Իր դիւանագիտական կարողութիւնը գնահատուած էր ինչպէս երկրին մէջ նոյնպէս նաև երկրէն դուրս, և անոնք որ մօտէն ճանչցած էին զինքը՝ կը խոստովանէին թէ Թուրքիոյ մեծ անձնաւորութիւններէն մին է իրաւամբ Յարութիւն փաշա, որ ժամանակակից մեծ մարդու մը, Յովհաննէս Պէյ Տատեանի զաւակ, կրցաւ ինքն ալ մեծ և իր գերդաստանին փառքը բլլալ։

Յարութիւն փաշա, որքան հաւատարիմ և խղճամիտ պաշտօնատար, նոյնքան նաև բարեպաշտ մէկ անդամը Հայ. Եկեղեցւոյ, իր պատկանած ազգին ալ ծառայած է։

Հանգուցեալը կը թողու երկու զաւակ՝ Տիրան պէյ Տատեան և Տիկին Ե. Նազարեան։

Տատեան գերդաստանին անունը բաւական օգնած էր Յարութիւն փաշայի պետական ծառայութեան մէջ վստահութիւն և համակրութիւն վայելելու։ Իր հայրը՝ մեծ անուն մը թողած է երկրին պատմութեան մէջ, և այնպիսի ատեն մը՝ երբ ուսում ու գիտութիւն այսքան մղում և կարևորութիւն ստացած չէին։

Յովհաննէս պէյի հայրը՝ Տատ Առաքել Ամիրայ՝ որ 1780ի միջոցները Ակնէն Պոլիս եկած և 15 տարի յետոյ վառօդապետ կարգուած էր՝ իր ժամանակին ուսումնասէր անձերէն էր և շատ հոգ ու խնամք տարած է իր զաւակներուն կրթութեան։ Պատմական աւանդութիւն մը կ'ըսէ թէ Տատ Առաքելի ծնողքը Սեբաստիայէն գաղթած են Ակն։ Տատ Առաքել ամիրայ 1812ին վախ-